



Ազգային և քաղաքացիական

# Ազգային և քաղաքացիական երգեր



Երեր երգերի ժողովածոր



Պատկերապատճեն



Աշխարհական թիւ Օհականականը,

Թ Բ Ֆ Լ Բ Ս

Կույսուն ՝ Շաբաթի Հօնա Քելթեան փողոց 1  
1917

L6n  
Q.3 86

Հրատակութիւն Խ. Ա. ԱՐԴՅՈՒՆԵԱՆԻ

L 5n  
2386

2002

# ԱզԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ



Պատկերազարդ




Խ. Ա. Քօնիսիլո  
Կարծաղիք կոմիտեի նախագահ

16



Խ. Ա. Տիգրանիլի  
Պատկերազարդ. և պիտ. մինիստր



Աջեման  
Արդարադատ, մին. անդամ Արտաքին գործ. մինիստր  
Զիւլիկ:



## Марсельеза.

Отречемся отъ старого міра,  
Отряхнемъ его прахъ спъ нашихъ ногъ;  
Намъ враждебны златые кумиры,  
Ненавистенъ намъ царскій чертогъ.

Мы пойдемъ къ нашимъ страждущимъ  
братьямъ

Мы къ голодному люду пойдемъ  
И пошлемъ съ нимъ злодѣямъ проклятия,  
На борьбу мы его позовьемъ.

Вставай, подымайся, рабочій народъ  
Иди на врага братъ голодный,

Раздайся кликъ мести народный  
— Впередъ, съ оружiemъ, впередъ?

Богачи-кулаки жадной сворой  
Расхишаютъ тяжелый твой трудъ,  
Твоимъ потомъ жирѣютъ обжоры,  
Твой послѣдний кусокъ они рвутъ.

28 №53

2386-2002



Բժ. Գ. Ե. Լվով

Եվրոպների խորհրդի նախագահ Արտ. գործ. նախկ. մին.




Պ. Կ. Միկիևիչ



Ա. Ի. Գուշկով

Նախկ. պին. մինիստր



Ա. Կ. Լվով

Արնոդի օբեր պրոկուրոր

Голодай — чтобы они пировали.  
Голодай — чтобы въ игрѣ б ржевой  
Они сбѣсъ и честь продав ли,  
Чтобъ глумились они надъ тобой.

Вставай, подымайся, рабочій народъ...

Тебѣ о дыхъ одна лишь могила;  
Что ни часъ недочмки готовъ,  
Царь-вампиръ изъ тебя тянетъ жилы,  
Царь-вампиръ пьетъ народную кровь.

Ему нужны для войска с лд ты —  
Подавай же ему сыновей  
Ему нужны пиры и пагаты  
Подавай ему крви своей.

Вставай, подымайся, рабочій народъ...

Не довольн -ли вѣчнаго горя  
Будемъ дружно бороться за-разъ  
Отъ днѣпра и до Бѣлаго моря,  
Отъ Поволжья по дальній Кавказъ.

На врага, на собакъ, на богатыхъ  
И на злого вампира царя,  
Бей, губи ихъ, злодѣевъ проклятыхъ,  
Заблестить новой жизни заря.

Вставай, подымайся, рабочій народъ ...

И вѣйдетъ за кро-авой зарею  
Солнце правды и братской любви,  
Хоть купили мы сѣр шиной цѣною:  
Кровью нашею — счастье земли.

И настан тъ година свободы,  
Сгибнеть з о, сгибнеть ложь навсегда  
И сольются въ одно вѣт народы  
Въ воль омъ царствѣ святого труда.

Вставай, подымайся, рабочій народъ,  
Иди на врага бр тъ гол дный.

Раздайся кликъ мести народный:  
— Впередъ, съ оружіемъ, впередъ!



## ՄԱՐՄԵԼԻՔԶ

Հրաժարւենք, ընկերներ, հին օրէնքներից,  
Նրանց փոշին թափ տանք մեր ոռքերից.  
Մենք պաշտել չենք կարող սովէ կուռքերին,  
Գարշում ենք բանակալ ցարերից:

Մենք կերթանք հալածւած ընկերների հետ,  
Մենք կերթանք մերկ,սոված բանւորնիրի հետ  
Դաւազիր թշնամուն մենք միշտ կանարգենք,  
Ու կուի նըրան գուրս կը քաշենք:

Դէս, եւ բողոքիր, այ բանւոր դաստկարդ.  
Ելէք թշնամուն կուելու, ջան եղբայրք.  
Թող գրոհ տայ տմբոխը անվախ, քաջ,  
Առաջ... առաջ... առաջ....

Բոնակալ հարուստներ անկուշտ յագուրգով  
Ծծում են մեր արթւն-աշխատանք.  
Գոփում են, յդփանում նրանք մեր քրտնքով,  
Պահանջում, որ մեր հացն իրենց տանք,  
Սոված կաց — որ տղայք զըւարձանան,  
Սոված կաց — որ խաղում ըիրժային  
Իրենց խիզճն ու նողին վաճառքի տան,  
Ու ծաղրեն մեր պատիւ մարդկային:

Դէս, եւ բողոքիր, այ բանւոր... և այն:

— 6 —



Անդրանիկ

— 7 —



Բենի, Վարդան, Համազասպ

Դու հանգիստ կունենաս լոկ զերեղմանում,  
Օր չանցնի հարկերը չաւելնան.  
Վամպիր ցարն կը տանջի քեզ իր զնդանում,  
Վամպիր ցարն կարօտ է քո արհան.  
Նրան պէտք են միայն բիւր զինւորներ,  
Գնուրս քաշիր, առւր նրան զաւակիր.  
Նրան պէտք են խնձոյք ու պալաներ,  
Տնւր նրան հիւթերը ջղերիդ:

Դէհ եւ բողոքիր, այ բանւոր... և այլն:

Բաւ է եւ որբան ցաւ կրեցինք մենք,  
Այսուհետ պիտ կուենք հանսապաղ.  
Հիւսիսից սկսած մինչև Արեւիք,  
Գօլգայից մինչ հետաւոր Կովկաս.  
Տէրտէրներ, ոստիներ, հարուստներին  
Եւ վամպիր թշնամի բիւր ցարին,  
Տնւր ջարդիր, նզովւած արդ չարերին,  
Մինչ փայլի արեր մեր օրին:

Դէհ, եւ բողոքիր այ բանւոր... և այլն:

Կը շողայ արինուս արշալոյսին  
Արել սիրոյ, եզրայրութեան,  
Նա զինւած արինով ժաղովրդին  
Պիտ հասցնի նրան երջանկութեան.  
Եւ կը գայ օրը սուրբ ազատութեան,  
Բանութիւնն ու չարիր կը կորչին,  
Եւ համայն մարդկութիւն սերտ միացած  
Վէհ աշխատանքին ջերմ կը հանգչին:

Դէհ եւ բողոքիր, այ բանւոր... և այլն:



Ա. Բ. Շինգարե



Բ. Ա. Մօնսեսյան



Ա. Վ. Վարդանիոն



Բ. Ա. Տերերյան

## ՄԵՐ ՆԱՇԱՏԱԿՆԵՐԻՆ

Խաղաղութիւնն ձեզ սնւրբ մարտիրոսներ,  
 Որ կուի գաշտում ընկաք անվեհեր,  
 Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,  
 Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.  
 Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք  
 Փշրէլ բոնութեան շղթան ու կապանք,  
 Բայց աւազ ձեզ հետ մեռան ձեր իդձեր...  
 Խաղաղութիւնն ձեզ, սնւրբ մարտիրոսներ:  
 Խաղաղութիւնն ձեզ, ազգի քաջ որդիք,  
 Սև հողն է այժմ ձեզ առել իր գիրկ.  
 Ձեր արեամբ ներկւած սար ու գաշտերում  
 Աչա խնդալից նոր կեանք է եռում.  
 Փթթել է գարձեալ գարուն ծաղկաւէտ,  
 Բայց աւազ, գուք էլ չէք փթթել յաւէտ...  
 Ճուրտ գերեզմանն է ձեզ առել իր գիրկ,  
 Խաղաղութիւնն ձեզ, ազգի քաջ որդիք:  
 Խաղաղութիւնն ձեզ, հերոս եղբայրներ,  
 Թռղ չը վրդովւին ձեր սուրբ սոկորներ,  
 Ձեր վերջին կամքը՝ «անէծքը թշնամուն»—  
 Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն  
 Անէծք ու վրէժ—դոքա մեր միակ  
 Կը լինեն կեանքի հզօր նպատակ...  
 Քնեցէք խաղազ, հերաս եղբայրներ,  
 Թռղ չը վրդովւին ձեր սուրբ սոկորներ:

Ա., Ծառուրիս



ԱՆԴՐԱՆԻԿԸ ԻՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ,

## ԱՆՎԱԽ ԸՆԿԵՐՔ, ՈՏՔԻ ԵԼՔՔ

Անվախի, ընկերք, քայլինք շարշար,  
Հոգով կուռում ամբանանք,  
Ազատութեան վեհ ճանապարհ  
Կրծքով հարթենք մեղ համար:


Մեր օրբանը՝ աղքատութիւն,  
Մեղ ճնողը՝ աշխատանք.  
«Եղբայրութիւն, ազատութիւն»—  
Այս լինի մեր զաւանանք:

Եղթաներում շատ տանջւեցինք,  
Շատ էլ սովոր մնացինք,  
Սև օրերը ահա անցան—  
Մօտ է ժամը՝ հասուցման:

Ժամ է այժմ էլ զործի զիմել.  
Դէպի կուր սլանալ.  
Մեղ քաջերիս չե էլ վայել—  
Մութ ուժերից վախենալ:

Եթէ նոքտ գոհ էին, կուշո—  
Այդ էլ շնորհիւ բանւորին,  
Եկ ինքներս լիցնենք փամփուշտ,  
Հրացաններին կապենք սւին:

Հզօր բազկով մենք յետ մղենք  
Լուծը ընկած մեր մէջքին,  
Եւ մայլ հողի կրծքին միսենք  
Եւ զըրօշն աշխատանքի:



Հայ կամացենե ի եւկ ոմք

## ՀԱՄԱԶԱՍՈՒ ԵՐԳԸ

Ծագեց արե ազատութեան,  
Փախէք ամպեր երկնքից,  
Համազասպը իր խմբովը,  
Կուգայ Խաչէն գաւառից:  
Գալիս են բազմաթիւ զօրքով,  
Աղիգեօպալ Բէգովը,  
Յանկարծ ընկաւ Ասկերանը,  
Հերոսների ունկանը:

Թիւրք խուժանը սարսափահար  
Փախչում էին զլխիկոր,  
Թողնելով իրանց հակից  
Դիակներ հարիւրաւոր:  
Հայերիս տէր Դաշնակցութիւն  
Քաջեր ունիս սրտալի,  
Ամբողջ աշխարհը հոչակւեցաւ  
Համազասպը պանծալի:



## ՄԵՐ ԵՐԳԸ

Առաջ, ձայնում են աւետող զանգեր,  
Խաւարին յաղթող լոյսն են աւետում,  
Մեր ընկերները վրէժ են առել  
Հանրութեան ցաւը իրանց սրտերում:  
Մենք ըմբոստներ ենք, առաջ միշտ առաջ  
Մեզի ծընել է ազատ մարդկութիւնն,  
Արիւնը նըրա և նըրա հառաջ,  
Կեցցէ մեր գործը, հաւասարութիւն:  
Ուր տառապահնքն է անվերջ գալարւում  
Այնտեղ ենք զընում ընկեր, միաբան,



Ուր մըշտկներն են արտասուր թափում  
Թըրջերու իրանց հոգերը խոպան։  
Խաւարից խրլած լոյսը ձեր ձեռքին,  
Ուխտի ասպանուկն հաւասարների  
Յաւիտեան բարձած մեր վեհ տասերին  
Քընում ենք խորը մութ խրճիթների։  
Մէնք երգ ենք հիւսում Ազատազրութեան,  
Առաջ, զանգերն են մեզ լոյս աւետում։  
Մէնք զինուրներ ենք խեղճ հումայնութեան,  
Կոցէ մեր զործը, ուր, եղայրութիւն։



## ԲԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Դուք զահ զնացիք կուի մէջ վճռական,  
Ամբոխի սիրով անկեղծ տողորւած։  
Դուք ջանք թափեցիք վերջին շունչ տալ նրան  
Տհոնել նրա կեանք, պատիւն աղատուած։

Երբեմն մաշւեցիք մութ, խոնաւ բանտերում,  
Անխիղճ դատաստան ձեր դէմ վճռեցին,  
Ռոսխ զահիճներ անողոք, աբնախում,  
Ճաշող շղթաներ ոտքիդ կուցին։

Հասել է ժամը, արթնացել բանւորը,  
Հսկայր քաջազօր զիմում է մահին,  
Իսկ ձեղ, բարի երթ, ընկերներ ձեր զործը  
Ազնիւ, վեհ տարաք ձեր ճանապարհին։

Զեր յետքից կըզմն թարմ ու նոր մարտիկներ  
Պատրաստ զործելու, զիմելու մահին.  
Իսկ ձեղ, բարի երթ, ընկերներ ձեր զործը  
Ազնիւ, վեհ տարաք ձեր ճանապարհին։

## Հ. ՅԵՊ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Մշակ, բանւոր, ոէնչպէր աղբէր,  
Արիք միանանք, յառաջ գնանք...  
Աշխատանքի դատի պաշտպան  
Դաշնակցութեան թև թիկունք տանք։

Բաւ է տանջւենք, քրտինք թափենք,  
Արիւն վաստակ դատենք, զիզենք,  
Շահագործող ցեցեր վասնեն,  
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն։

Դէհ, սկ օրեր, բողոք զարձէք,  
Արիւն, քրտինք երկունք մտէք,  
Տանջանք, զրկանք լեզու առէք,  
Սոցիալիզմի ճամբան բացէք...  
  
138 Ե-2002



## ԱՌԱՋ. ՎԵՐ ԿԱՑԷՐ

Առաջ, վեր կացէք հաւասարութեան  
Եւ իրաւունքի արդար պահանջով,  
Թոհ սարսի զահը բըռնակալութեան,  
Եւ զղթան զընզայ աղտոտ մահերգով...

Առաջ, վեր կացէք, զրօշը կուի  
Տանելու համար վսիմ յաղթութեան,  
Առնական կամքը թող չը պարտւի,  
Փառք մարտիկներին Ազատազրութեան...  
  
138 Ե-2002

Վեր կացէք այգպէս, ձեր բունցքներով,  
Քմբոստ, ապատամք, վառք մարտնչողին,

Մահը ոչինչ է անմահութեան քով,  
Փառք վատ թշնամուց չը պարուղներին...

Փառք ըմբոսաներին... վեր կացէք այզպէս,  
Տիրողի լուծից ընդմիշտ փըրկւած,  
Եւ շղթայակապ առիւծների պէս  
Սրգար ցասումով, դայրոյթից վառւած:

Վեր կացէք, առաջ, և թնդ կործանուի  
Գարշելի գահը սըոնակալութեան,  
Բարձէք ձեր ուսին գրօշը կուի,  
Եւ, գէն գնացէք Ազատագրութեան...



\*\*

Ազատութեան այն վառ սէրը  
Թունդ որոտաց իմ սրտում,  
Իմ հայրենեաց սուրբ անունը  
Ինձ պատերազմ է կանչում;

Տրա, լա լա լամ:

Ելէք, ելէք, հայկազունք,  
Ելէք, հայկայ զաւակունք,  
Ելէք, ելէք, հայ եղբայրներ,  
Առէք, գէնք ու նիզակներ,

Տրա, լա լա լամ.

Այս օրերը, մեր քաջ կեանքին,  
Նւիրական թող լինին,  
Ով սիրում է Ազատութիւն,  
Թող ըմբոնայ հայ անուն,

Տրա, լա լա լամ:

Ելէք—ելէք, և այն:

## ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՈՒԵՆՔ

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք,  
Ազգի կորուսաը զէնքով յետ խլենք.  
Այսքան դար լացինք, ով էր լուզը,  
Մեղ թնչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլիս ըլլանք և ոչ լաց լինենք,  
Կրակւած սրտով մեր գործը վարենք,  
Ասկվեհեր քաջին այս է պատկանում,  
Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչուու տաճիկը թնդ լայ,  
Երբ հայ քաջի գէմ կուի դուրս կը գայ.  
Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,  
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէծք այն հօրը՝ չի մղում որդուն,  
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն,  
Ամծթ այն հային և բիւր նախատինք,  
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Արիք, Հայկազննք, յառաջ ընթանանք,  
Սահմանադրութեան նոր բարե մակ տանք,  
Որ ազգն երբ դանի փրկարար կոչեց,  
Նոր հոգի, նոր կեանք անոր պարզեց:  
Եկէք, բարեկամք, առ բարձրեալն Աստած  
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ

Ազգն ու սահմանադրութիւն:

Զրկանք, բոնութիւն վատթար վարչութեան  
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.  
Սահմանադրութիւնն ելաւ զայն վանեց  
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց,  
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,  
Ուր ամեն վայրկան գոչել պարտ է մեզ՝  
Կեցցէ, կեցցէ և այլն:

Դու ալ, Հայաստան, սիրուն Հայրենիք,  
Ալ այսունետե մի սպար լոփիկ,  
Զի ալ քու որդիք նոր հոգւով բերկրեալ՝  
Զքեղ հարս կուզեն տեսնել զարդարեալ:  
Ալ մի լար, մայրիկ. լացդ ի պար փոխէ  
Եւ ձայնիւ քաղցրիկ որդոցդ հետ երդէ՝  
Կեցցէ, կեցցէ և այլն:

Հայեր, միանանք մեր մօրն հետ, օրհնենք  
Զանոնք, որ մեզի տւին սուրբ օրէնք.  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ՝  
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ,  
Թող և մեր որդիք հետ անոնց անւան  
Բիւրաւոր տարի օրհնեն ու կարգան՝  
Կեցցէ, կեցցէ և այլն:

#### 6. Սվածեան



### ՎԱՐՆԱՒԵԱՆԿԱ

Շաշում են ոիներիմ հողմերն անընդհատ,  
Սև, մութ ոյժերը կատաղի ձնշում,  
Նըրանց գէմ վարում ենք օրհասական մարտ,  
Անյայտ մի վիճակ է մեզ գեռ սպասում.

Բայց մենք կը պարզենք անվախ ու հպարտ  
Ռազմի զրօշակը—բանւորի ազատ,  
Դրօշակը մեծ գործի ժողովրդական  
Յանուն նոր կեանքի—սուրբ ազատութեան:

Դէպի մարտ արեան,  
Արդար, սրբազն,  
Քայլեցէք առաջ,  
Բանւորներ քաջ: Կրկնել:

Մեսում է մեր օրում բանւորը սովից,  
Եղբայրներ, միթէ էլի համբերենք,  
Մեր կտրիճ ընկերներն կախազաներից  
Հերոսին վայել չեն սարսել երբէք.  
Վէս գաղափարի համար ընկնելով,  
Զեն կորել անհետ պատի զոհերը,  
Նըրանց անունը յաղթական երգերով  
Պիտ յիշեն յետնորդ մեր սերունդները:

Դէպի մարտ արեան և այլն:

Առելի է թագը բոնապեաների,  
Ամբոխի շղթան միայն պաշտելի,  
Նըրա արիւնով ողողւած գահերը  
Մեր սոտիների արեամբ կը ներկենք.  
Վրէժ ու նի անողոք բոլոր պիղծերին,  
Բանւորի արեան կարօտ ցեցերին,  
Վրէժ, վրէժ ու մահ բոլոր պլուտոկրատներին,  
Մօտ է յաղթութեան ժամը պանծալի:

Դէպի մարտ արեան և այլն:



## Ի ՇԱԽԱՐԾԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԵԺՔ

Բամբ... Որոտան բարձուսատ բոմբիւնք

Այրաբատեան դաշտն ի վայր,  
Արի արանց արիւնքն յեռանդն առատանան  
ի հրազայր:

Հրաւէքք հայրենեաց հոչակի ընդհանուր,  
Հողիք Հայկաղանց բորբոքին ի հուր.  
Որք Երկնաւորի պսակին էք կարօտ,  
Որք Երկնաւորին փառաց երկնայորդ:

Հապօն, արի արանց մանկնենք,  
Հայրենավլէքք Հայկաղունք.

Հապօն ի զէն գունդ ի գունդ,  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ.  
Ի զէն, ի վրէժ, օն անդր յառաջ,  
Ի զէն, ի վրէժ, մի ձախ մի յաջ,  
Օն անդր յառաջ,  
Հապօն յառաջ:

Դ. Աղիւան



## ԱԶԱՏՆ ԱՍՏԻԱԾ

Ազատն Աստւած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փչել  
Իմ հողանիւթ շինւածքին  
Կենդանութիւն պարզել:

Ես անբարբառ մի մանսուկ,  
Երկու ձեռքս պարզեցի

Եւ իմ անզօր թևերով,  
Ազատութիւնը դրկեցի:

Մինչ զիշերն անհանդիստ,  
Օրորոցում կապկապւած,  
Լալիս էի անդադար,  
Մօրս քունը խանգարած:

Խնդրում էի նորանից  
Բազուկներս արձակել.  
Ես այն օրից տւխտեցի,  
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզւիս մինչ կապեր,  
Արձակւեցան, բացւեցան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից,  
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասեցի,  
Զէր հայր կամ մայր կամ այլ ինչ,  
Ազատութիւն գուրս թուաւ,  
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն» ինձ կրկնեց  
Ճակատագիրն վերեկց,  
Ազատութեան գու գինուոր  
Կամբօս գրւել այս օրից:

Ո՞հ փշոտ է ճանապարհն,  
Թեղ շատ փորձանք կը սպառէ,  
Ազատութիւն սիրողին,  
Այս աշխարհը խիստ նեղ է:

Ազատութիւն գոչեցի,  
Թող որոտայ իմ գլխին,  
Կայծակ, փայլակ, հուը երկաթ,  
Թող դաւ կնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղմն,  
Մինչի մահու անարգ սիւն,  
Պիտի գոռամ, պիտ գոչեմ,  
Անդադար ազատութիւն:

Մ. Նալբանդիան



## ԲՈՆԱԿԱԼՆԵՐԻՆ

Sit tibi terra gravis—  
«Յոնակալներ, ձեզ եմ տառմ,  
Երբ ժողովուրդները լիբուսանան,  
դուք կորած եք...»

Դողացէք յաւէտ, գաղափարը կայ,  
Զեզ դէմ ծածանող զըրօշը կարմիր,  
Օ՛, սարսափեցէք, մենք բընաւ չենք լայ.  
Մերն է անսահանջ կըոին հըրալիր...

Մեզ համար պայքարն երբէք վերջ չունի,  
Մենք ձեզի դէմ ենք... մեր բըսունցքներով,  
Հողը մեզ համար ծանըր չի լինի  
Երբոր վար ընկնենք փառքի պըսակով:

Զեզ կը նըղովենք, կը նըղովեն ձեզ.  
Գերեզմանին մէջ ձեզ կընկերանայ  
Կարմիր անէծքը թունոտ օձի պէս,  
Եւ աշխարհի մէջ փառք չէք ունենայ...

Մենք կը կըուենք միշտ որքան դուք կիշխէք,  
Մենք պահանջում ենք ոչ իշխող, ոչ գահ.  
Իդէաները չեն յաղթւի երբէք,  
Լոկ դուք կը պարտէք աշխարհի վրայ...

Լոկ դուք զոհ կերթաք մեր յարթանակին,  
Զեզի ատում է զայրացկոտ հոգիս—  
Վաղը մենք կերպենք ձեր ամեն մէկին՝  
...Sit tibi terra gravis...



## Լ Ռ Ե Ց

Լոկց: Ամպերը եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսին աչքէս խլեցին.  
Մացի մենակ՝ հոգիս վրդոված,  
Զեններս ծոցիս զլուխս քաշ արած:

Եւ այնուհետև ամեն իրիկուն,  
Մուռմ եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
Նորա տիրամած դէմքը հայելիս՝  
Յիշում եմ թշւառ վիճակը ազգիս:

Ա՛յս ցոլա, փայլէ տիրագէմ լուսին,  
Գուցէ քո փայլից փայլ տաս և հային,  
Պատմէ շատերուն վարդանի մահը,  
Կամ ի՞նչպէս կորաւ հայ աղզի դահը,  
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը—աշխարհը հայտառան:

Գամառ-Յարիսա



Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբ որ բացելն զններն յուսոյ,  
Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,  
Զընադ երկիրս մեր Արմենիոյ,  
Երբ փայլէ իւր բաղրմիկ օրեր,  
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,  
Երբ որ ծառերն հագնին տերե,

Ճանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արե:

Տեսի գաշտերն Ռնուրիոյ,  
Լեռն Լիբանան և իւր մայրեր.  
Տեսի զերկինս Բատլիոյ,  
Վենետիկ և իւր կոնսորչներ:  
Կղզի նման չիք մեր կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայր է արդարե.

Ճանկամ տեսնել զիմ կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արե:

Ճասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իզծ կաւարտի,  
Ճասակ մը ուր հէզին ի տեսչ,  
Յիշատակաց իր կարօտի:  
Յորժամ քնարս իմ ցրտանայ  
Սիրոյն տալով վերջին բարեա,

Երթամ հնջել զիմ կիլիկիա  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արե:

Ի՞Զ ՀԱՄԱՐ ԶԷ

Ինձ համար չէ գործնան զալը,  
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,  
Ուրախութեան սրախ գրգիռը,  
Աչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաղզը,  
Ինձ համար չէ երջանկութիւնը,  
Եւ մրայօն կուսի աչքերը,  
Նոցա արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ փայլուն լուսնի  
Անառառ ու սար լուսաւորելը,  
Գարնան վարդի երգչի տաղերը,  
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ բարեկամաց,  
Մէկտեղ սիրով տօն կատարելը,  
Զատիկ օրւայ ուրախ ասելը,  
«Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար:

Ինձ համար չէ ճնողաց լացը,  
Ինձ համար չէ աղջկայ տիսրիլը,  
Գերեզմանիս վրայ արտաւիլը,  
Բարեկամաց՝ չէ ինձ համար:

Բայց ինձ համար կուգոյ ժամը,  
Կերթամ թշնամեաց պատերազմը,  
Եւ մահառիթ սպանիչ դնդակը,  
Անդ պատրաստւած է ինձ համար:

## ԶԱՅՆ ՏՈՒՐ, ՈՎ ԾՈՎԱԿ

Չայն տուր, ով ծովակ, ինչու լոռում ես.  
Ողբակից լինել չկամիս գժբաղդիս.  
Շարժեցք զեփիւս ալիքը վէտ վէտ,  
Խառնեցք արտասուք այս ջրերիս հետ:  
  
Հայաստանի մէջ անցքերին վկայ.  
Սկզբից մինչ այժմ, ինզրեմ ինձ ասա,  
Միթէ միշտ այսպէս կը մնայ Հայաստան,  
Փշալից անապատ երբեմն բուրաստան:  
  
Միթէ միշտ այդպէս ազգը խոճալի  
Կը լինի ծառայ օտար իշխանի,  
Միթէ Աստուծոյ աթոռի մօտին  
Անարժան է Հայն և Հայի որդին:  
  
Արգեօք գալու է մի օր ժամանակ՝  
Տեսնել Մասիսի գլուխն մի դրօշակ.  
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք  
Դիմել զէպ իւրեանց սիրուն հայրենիք:  
  
Դժւար այդ, միայն, Տեսուչդ վերին,  
Կենդանացրու Հայութեան հոգին,  
Ծագիր նոյց դու քո լոյս գիտութեան,  
Որով իբր էակը նոքա բանական,  
Կը ձանաշեն մարդուս կեանքի խորհուրդը,  
Կը լինի զործովք ծիրոջ փառաբան:

Յ. Մելիք-Յակոբեան



## ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՑ

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,  
Ֆիղային էր գաշնակցական վրէժ լուծում  
հովտումը:  
  
Սոսկաց քիւրզը քնաթաթախ մազրիկցին,  
Զէր երազում ջնջւել իսպան ֆիղայիցը  
լուսաբացին  
Եաման Աստւած, ֆիղան եկաւ ուր փախչենք  
Ասաց, որդուն կրծքին սեղմած լեղապատառ  
քրդումին:  
  
Մի վախենար, հանգիստ եղիր բաջի ջան,  
Կանանց երրեք ձեռք տալու չէ վրէժինդիր  
քաջ ֆիղան:  
  
Մի ժամւայ մէջ մազրիկ ցեղը ջնջւեցաւ,  
Խանասորաց կանաչ գաշտը կառմէւ Եյանոց  
ներկւեցաւ,  
Փչիր զեփիւս, դէպ Առաւաւ մենք թռչենք,  
Դիրքեր բռնենք զաթայ հալւայ ձիւնի ջրով  
ճաշակենք:  
  
Մերթ կուռում է, մերթ բարձրանում քաջ  
ֆիղան,  
Եղակի է պատմութեան մէջ արշաւանքի  
տեսաբան:  
  
Զկար կարօն, տիսուր պատեց ամենքին  
երմնի է նրա հոգուն, որ զոհ դարձաւ այս  
կուին:  
  
Թեղ ենք յանձնում, ով պաշտելի Առաւուը  
կրծքից մէջը ամուր պահէ, անմահ զոհերն  
հայերուն:

Հայեր, յիշէք նւիրական այս օրը,  
Յուլիս տմուի քսանհինդին կատարեցէք այս  
տօնը:



## ՇՈՒՇԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,  
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից,  
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,  
Արդ հեռանաս, մեղ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անգամ  
Լւանայիր, գեղ դնէիր ամեն ժամ,  
Քո մազերից ուրուէիր վիրակապ,  
Քո բոլոր կեանքր ազդիդ համար էր աղաղ:

Արդ Հայոց գորքն իւրեանց մօրից որրանայ,  
Վրաց ազգը՝ քո ինսամոք պերճանայ,  
Հայաստանը զրկիլ իր սուրբ Շուշանից,  
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,  
Մեր սիրտ հոգին քեղ հետ տանիս մաքրուհի,  
Գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեղ ընկեր,  
Աջն ու խաչը քեղ պահապան զօր գիշեր:

Յ. Խարինեանց



## ՊԱՆԴԻՏԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պահպուխտ կը հեծիմ,  
Դու, Հայրենիք, քեղ յիշելով կարտասւեմ:

Զկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,  
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:

Օտար երկիր, արե, ասազեր և լուսին  
Թէս պայծառ, ինձի խաւար կը թւի:

Բնակարանո՞ւ տիուր պահպոկ օտարաց,  
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, ուր է մայրս քաղցրանուն,  
Ո՞ւր գաւակունքս, ուր սիրելիքս սիրասուն:

Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս:  
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:



## ՊԵՏՈՅԻ ՅԻՇԱԾԱԿԻՆ

Գարահիսար լերան կրծքէն՝  
Նա էլ լնկաւ վիրաւոր,  
Կուրծքը պատուած, սիրտը խոցւած՝  
Չար թշնամու գնդակով:

Ժայռոս լերան լերկ կատարից  
Վար ոլացիր սև արծիւ  
Թհերդ բաց, լայն թհերդ  
Ու ջրանուն հով արա...

Խոցւած սրտից մուգ տրիւնը  
Կաթիլ, կաթիլ կրծորայ,  
Ալս, ջիւանու կեանքն է հոսում  
Ցաւոտ կրծքի լայն վէրբից...

Ժայռոտ լեռան լերկ կատարից  
Վար սլացիր մե արծիւ,  
Թևերդ բաց լայն թևերդ  
Ու ջիւանուն հով արա...



## ԱՌԱՋ ԸՆԿԵՐՆԵՐ

Առաջ, ընկերներ, բարձէք ձեր ուսին  
Այն ծանըր խաչը վլսեմ փըրկութեան,  
Մահը գերի է յաղթող զինւորին,  
Անմահութեան մէջ չի կայ գերեզման:  
  
Այն ծանըր խաչը կը ճընշէ ձեզի,  
Բայց, առաջ, ընդմիշտ յոյսը ձեր կըրծքին՝  
Ահա շփորը արգար կըսիւի,  
Կարմիր դըրօշը մեծ նըպատակին:

Օ՛, միայն նա է ըստրուկ, անարգւած  
Ու կըուի համար ըըսունցք չի շարժում,  
Առաջ, ընկերներ, շղթան ջախջախած,  
Միայն ըմբոստն է մահը նըւաճում...  
  
Թո՞ղ ձեզ չի լըքէ վեհ յաղթանակի  
Այն պայծառ յոյսը՝ որ ձեր սրտերում  
Վասեց հընոցը՝ մաքուր վըրէժի՛,  
Ահա ձեր կըուով Արևն է ծագում...

Դէհ, իրաւունքի բարձըր դըրօշով,  
Խաչը փըրկութեան միշտ ձեր ուսիրին՝  
Առաջ ընկերներ, միայն կըսիւնկ  
Կարող էք խըլել վեհ փառքի դափնին...



## ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինւոր ենք առանց ի վիճակ,  
Պէտք է սուրբ ծառայենք երկար ժամանակ,  
Պարսկաստանի խորքից եկել է նամակ...  
Գնում ենք բարով,  
Կուշանանք տարով,  
Արիւն սուր ու թուր  
Պատերազմի գաշտ—  
Կըսպասէ մեզի:

Դուշմանը տւեց մեզ ջան-Փիտայ անուն,  
Այդ անւան համաձայն՝ տեսաւ զօրութիւն  
Մենք չենք սիրել ազատ կեանքի բոնութիւն  
Ուխտել ենք կուել,  
Այդ սիրով մեռնել,  
Համոզւած ենք որ—  
Միայն զէնքով կայ—  
Հային փրկութիւն:

Ստամբոլը պէտք է լինի արեան ծով,  
Ամեն կողմից կոիւ կըսկսի շուտապ,  
Գօթուրից գէսի Վան անցնել ըշտապով  
Աջից Վարդանը.

Զախից հշխանը,  
Գրտել Աղբակ,  
Տարածել սարսափ,  
Փառք Ազատութեան:

Թահրան



## ՊԱՆԴԻՏԻ ՈՂՋՈՅՆԸ

Ողջոյն տւէք իմ Հայրենիաց  
Կիսակործան տաճարներուն,  
Ողջոյն տւէք աւերակաց  
Արարատիան գաւառներուն:

Ողջոյն տւէք Աւարայրին  
Արիւնաներկ սուրբ վայրերուն,  
Ողջոյն տւէք տիսուր լուսնին,  
Որ լացնէ սև շիրիմներուն:

Ողջոյն տւէք պանդուխտ Հայուն,  
Թշւառ Հայուն, չուառ Հայուն:  
Ո՞հ, ձեռք տւէք, ո՞հ, սիրտ տւէք,  
Հոգի տւէք անկեալ Հայուն:

Ողջոյն տւէք ոլոր մոլոր,  
Մոլոր վազող գետակներուն,  
Ողջոյն տւէք պղտոր բոլոր  
Աղիւեղի աղբիւրներուն:

Ողջոյն տւէք ի յոկ եղած  
Երքայական պալատներուն,  
Ողջոյն տւէք գեանատարած  
Երբոց ամբիծ մասունքներուն:

Ողջոյն տւէք դուք խումբ ի խումբ,  
Ուր կան թաղած հոգիներուն,  
Ուր Հայ սովիսակը թումբէ ի թումբ  
Կեանք կը խնդրեն գեռ շատերուն:

Ողջոյն տւէք Հայ մուսային,  
Որ լայ զփառու իր հայերու.  
Ողջոյն տւէք իմ քնարին,  
Որ Հայկայ տանն է ողբերգու:



## ՏՈՒՐ ԶԵՐՔԻ ԵՂԲԱՅՐ

Տուր ձեռքդ եղբայր, ժամ է շարժւելու,  
Ժամ է ժամ յառաջ՝ ոտքի եխնելու.  
Հասել է արդէն հայերուս օրհաս,  
Եխնել չըլլինել մեղնից է կախւած...

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,  
Հերիք, ուրիշց օգնութիւն հայցենք,  
Մենք ենք տանջւողը, մենք չարչարողը,  
Մենք պիտի լինենք մեզի փրկող...

Մեր վիճ հայրենիք դարերով ճնշւած,  
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկւած.  
Պահանջէ մեղնից արիւնով մաքրել,  
Թշնամու արեամբ մեր գաշտ ու լեռներ...

Շտապիր, եղբայր, առ անա քեզ գէնք,  
Սըրանով միայն փրկւելու ենք մենք,  
Այս է զործ ածում մեր գէմ թշնամին,  
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Այստեղ է քո կեանք, այստեղ է քո մահ,  
Ելիր ընդ յառաջ, ելիր զու անահ,  
Արդարութիւնն է զործին նշանակ,  
Այստեղ կը զանէ նա իր յազթանակ:

Շատպիր, քանի դեռ չէ անաղան...  
Քեզ կը հետեւ ամբողջ Հայաստան,  
Ազատութիւնն է գործի գրաւական,  
Այնաեղ կըստանաս պսակ պատւական:



### ՀՐԱՒԵՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ի Զէն հայեր, ի սուր և ի հրացան,  
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն,  
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,  
«Թուէք հայեր, թուէք, դէպի Հայաստան»...  
Արեւելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,  
Դպրոց ու թնդաց քաղցր աւետիս,  
Հայկայ քաջ դաւակաց առոյգ կուրծքերից  
Ազատութիւն հնչեց ամեն կողմէրից:  
Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան  
Փրկութեան աւետիս առած իւր բերան,  
Դիմում են ցնծութեամբ իրրե հարսանիք,  
Աւստած սուրբ արիւնով փրկել հայրենիք:  
Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,  
Առիւծարար վրէժ, վրէժ է կանչում,  
Արիւնով ներկում է բոլոր դաշտերը,  
Արիւն է լոկ հօսում բոլոր գետերը:  
Թշնամին զարհուրած փախուստի է զիմում,  
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում,  
«Յաղթութիւն, յաղթութիւն, զոչենք միա-  
«Թշնամին կորած է, կեցցէ Հայաստան»...

### ՊԱՐՁԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզիր աղբիւր, պարզիր քեզնից ջուր տանեմ:  
Պարզիր, պարզիր բէզի տղին ջուր տանեմ:  
Աղբիւր գիտես քիւրզը մեզի ի՞նչ կանէ,  
Կը կողոպատէ, կը չարչարէ կը սպանէ:  
Կաը ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,  
Մեր սեփական թագաւորներ ունէինք:  
Գահ ու փառքից ազատ կեանքից զըրկւեցինք,  
Արիւնարբու թշնամու ձեռք մատնեցինք:  
Դէս, շնուր պարզիր բէզի տղին ջուր տանեմ,  
Պարզիր, պարզիր Խան-Մուրասին ջուր տանեմ:



### ՊԱՆԴՈՒԽՈՑ ՀԱՅՆ

Հայրենիք սրբազան,  
Եմ սիրուն աշխարհ,  
Թոչում եմ դէպի քեզ  
Հոգովս անդադար:

Բայց, աւազ, այս բանտում  
Փակւած եմ անտես,  
Պատերազմի դաշտում  
Զեմ կուտում և հս:

Հանապաղ տանջւեցայ  
Քո ձակատագրով  
Սրտումս շղթաների  
Զայներ կրելով:

Թող այստեղ չարչարւիմ  
Անձանօթ կտպւած,  
Միայն քեզ Հայրենիք,  
Տեսնեմ ազաւած:

Մ. Քոչուբէկան



ՀՈՅՈՍՈՒՆԻ ԱԼԵՏԱԲԵՐ

Հայաստանի աւետարեր,  
Ով գու կունակ ձայնդ անուշիկ  
Արդ եկել ես օտար վայրեր,  
Ի՞նչ լուր բերիր ինձ պանդիտիս.  
Ո՞հ հայրենեաց կունակ սիրուն,  
Տար իմ ողջոյնս անդ հայրուն:

Ասա, կոնակ հայ զաւակաց,  
Թէ ձեր եղբայր օտար վայրեր,  
Բնիկ է բայց սիրոն չմոռցած,  
Միշտ հայրենեաց կարօտ եղեր.  
Ո՞հ հայրենեաց կունակ սիրուն,  
Տար սիրոյս հետ և զիմ ողջոյն:

Մեր հարթ կանաչ մարգագետինք,  
Ուր կագաւեն հայ օրիորդներ,  
Արդեօք քաղէ իմ անուշիկ,  
Մրտիս հատոր սիրուն վարդեր.  
Ո՞հ հայրենեաց կունակ սիրուն,  
Տար անկեղծ սէրս անդ հայրուն:

Մայրս կը խորհիմ գիշերն ամեն,  
Երբ աստեղք բարձր երկինս վայլեն,

Դառն արցունքներ տչքիցս վագեն,  
Երբ կը յիշեմ իմ հայրենիքս.  
Ո՞հ հայրենեաց կունակ սիրուն,  
Տար արցունքներս անդ հայրուն:



Բ. ԲԱԽՆԱՆ ԱԼԵՐՅՈՅԻ

Ով գու բարեկամ այրւած սրաերու,  
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,  
Երգէ, պլազուլիկդ, երգէ ի սարէզ,  
Զանմահ քաջքն Հայոց երգէ հոգւոյս հետ:

Թագէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,  
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունդ տուաւ,  
Ի խաչին թևէն թուայ ու հասայ,  
Գտայ զքեզ ի գաշտ քաջին Վարդանայ:

Պլպհուլ, քեզ համար մեր հարքն ասացին,  
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին  
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրոցիկ,  
Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ:

Զմեռն յանապատ կու գայ ի լաց,  
յԱրտազ գայ գարունն ի թուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յեղիշէն ձայն,  
Թէ պատասխանիկ մարդեօք տայ վարդան:

Ճ. Գ. Ալիսան



ՀԱՅԳՈՒԽԻ ԵՐԳԵՅԻՑ

Ես ընկել եմ քրդերի մէջ,  
Արիւնաշաղադ վէրքով լցւած,

Ինձ կարծել են մեռած,  
Թողել գնացել են,  
Ես այս արեան դաշտում,  
Անտէր, անտիբական,  
Կիսամեռ թշւառս ինչ անեմ,  
Մնացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով,  
Հազարներով փռած գետին,  
Սատկած և վիրաւոր,  
Շարիփ բէզի քիւրդեր,  
Մըմնջում են մելամադուու,  
Հէզ դօներ,  
Տեսարանն ուրախալի էր,  
Թեթևանում էր իմ վիշտը,

Քրդական լաց կոծի միջին,  
Յանկարծ լուցի, մայրիկ ջան,  
Ա՞խ այդ ազդու—  
Հառաչանքն էր հայկական,  
Գնացի դէպի նրան,  
Տեսայ՝ ընկերս էր,  
Զինուոր էր նա վէրք ստացած,  
Արեան դաշտն ընկել ինձ նման:

Չեսք մեկնեցի մակրիմին,  
Ասի, նայիր չորս բոլորդ,  
Տես և հոգի ստացիր,  
Հայի յաղթութիւնից.  
Մհծ է ջանփեղայը,  
Փառք իր դրոշակին:

Յաղթութիւնով ոգեորւած,  
Հեռացանք այն արեան դաշտից:

Երուսաղէմի դաջի պէս...  
Տեսէք վերքերուս տեղերը,  
Հաւատացէք հայ զինւորի—  
Ուղղութիւնը,  
Որ չէ խնայում ձեղանից—  
Իր արիւնը,  
Ազատութեան զոհերն ենք,  
Կարեկից անձնէր սրտով:

Տարհան



### ԶԱՐԹԻԲ ՈՐԴԵԱԿ

Զարթիբ որդեակ, ուշը բեր, վեր կաց,  
Պատերազմի փողն հնչեց,  
Զարթիբ գոչեց ձայն հայրենեաց,  
Կենաց մահու ժամն հնչեց:

Պատրաստել եմ քո զէսք, քո սուր,  
Եւ քո զօտիդ ոսկեթել,  
Եւ մի պսակ ոսկեփետուր  
Երկինք կանխաւ պատրաստել:

Հաւաքել եմ քո զէնքերդ,  
Ահա զլսիդ վերև կան,  
Ինչպէս երբեմն քո գիրքերդ  
Երբ կերթայիր վարժարան:  
Միթէ զու չիս յիշեր երբոր,  
Գրիչ ու թուղթ տւի քեզ,

Փոխան դոցա ըսի մի օր,  
Աւրիշ բան մ'ալ կուտամ քեզ:  
Ահա փոխան գրչի քեղ սուր,  
Փոխան թուղթի կուի դաշտ,  
Գնա կուէ դու քաջի պէս,  
Ուրախացուր տրտմեալ ազգ,  
Ելի՛ր կապեմ սուրը մէջքիդ,  
Սոպար կախեմ քո վղիդ,  
Եւ մի գրօշակ ոսկեփետուր  
Թող ծածանի աջ թեիդ:

Խորիմեան-Հայրիկ



ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մայրիկ ջան, մնաս բարով,  
Ես կերթամ սարով քարով,  
Վերագարձիս սպասէ,  
Բաժանւում եմ մէկ տարով,  
Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Բաժանւում եմ մէկ տարով:

Բարով երթաս, որդեակս,  
Եմ փայլուն արուսեակս,  
Եւ անկողին չեմ մտնի,  
Մինչև դառնաս հոգեակս,  
Իմ բալէս, իմ բալէս  
Մինչև դառնաս հոգեակս:

Հեռու երկիր պիտ գնամ,  
Օրհնէ այնտեղ չի մնամ,

Ճամբու պաշար պատրաստէ,  
Մի լար, անփորձ կը դառնամ:  
Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Մի լար անփորձ կը դառնամ:

Նպատակէդ չը շեղւիս,  
Որ պիտանի մարդ լինիս,  
Աղօթքս անէծք կը դառնայ,  
Թէ որ չարին հետեւս:  
Իմ բալէս, իմ բալէս,  
Թէ որ չարին հետեւս:

Աշխարհն իրար է անցել,  
Արինը ծով է դարձել  
Հանգիստ քնել չեմ կարող,  
Սիրսս վէրքով է լցւել:  
Մայրիկ ջան, մայրիկ ջան,  
Սիրսս վէրքով է լցւել:

Գնա հասիր օգնութեան,  
Եղի՛ր հոգի փրկութեան,  
Ես կաղօթեմ անդադար  
Տէրը լինի քեզ պաշտպան,  
Իմ բալէս, իմ բալէս,  
Տէրը լինի քեզ պաշտպան:



ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշել էր,  
Երկինքը լի աստղերով,  
Եւ լուսինը մեղմ փայլում էր,  
Կաթնանման իր լոյսով:

Նա նայում էր, լոիկ մնջիկ,  
իրեւ մի կոյս դէպի վան,  
նորա աչքին երեսում էր,  
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քրդեր,  
Առած սուր, թուր, հրացան,  
Կոտորում են կողովառում են...  
Աւերում են անտէր վան...

Եւ կարծես թէ երկնքիցը  
Ասում էր այդ լուս վկան.—  
Վրայ հասիր հայ ազգասէր,  
Զեռքից գնաց Հայաստան:

#### Ս. Սահմանական



ԵՍ ԿՈՒԶԵՄ ԿՈՒԽԵԼ.

Հերիք է մայրիկ, ոռւ ինձ փայփայես,  
Հերիք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես,  
Ես կուզեմ ջարդել շղթան բռնութեան,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քսան տարուց անց կացաւ,  
Սիրտս վրէժով լիքը լցւեցաւ,  
Չեմ ուզում տեսնել եղբայրքս թշւան,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Լացով չեմ կարող փրկել Հայաստան,  
Մայրիկ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,  
Չեռներս ծալած չեմ կարող նստել,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:

Համիդն ունի գործեր մեղի հետ,  
Մեզ կոտորում են մեզ թալանում են.  
Հերիք է, մայր իմ, չեմ կարող լոել,  
Ես կուզեմ կուել, ես կուզեմ մեռնել:



#### ԶԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ

Զախորդ օրերը՝ ձմռայ նման կուզան ու կերթան,  
Վհատելու չէ, վերջ կունենան կուզան ու կերթան,  
Դառն ցաւերը մարզու վերայ չեն մնայ երկար,  
Որպէս յաճախորդ՝ շարաէ շարան կուզան ու կերթան

Փորձանք հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,  
Ինչպէս ճանապարհի կարաւան կուզան ու կերթան:  
Աշխարհը բուրբաստան է յատուկ, մարդիկը ծալիկ,  
Որքան մանիշակ, վարդ պալասան կզան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ ակարը տխրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուզան ու կերթան.  
Արել առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպ աղօթարան կուզան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուզան ու կերթան.  
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, ազգերը հիւր են.  
Այսպէս է կանոնը բնական—կուզան ու կերթան:



## ԹԵ ԻՄ ԱԼԵՒՈՐ...

Թէ իմ ալեւր հերքս ունային,  
Ոյժս ինձ յետ զար, կտրիծ զառնայի,  
Նժոյդ ձի նստած, բեղս ոլորած,  
Զեսա թուր առած ես զաշտ կերթայի  
Ես գաշտ կերթայի—զաշտն Աւարայրի,  
Ողողաց ցօղած հայոց արիւնով,  
Ազգ իմ սիրական, դու ազդ Թողոգոմեան,  
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի:  
  
 Կասէի հայոց օրիորդներին,  
«Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,  
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—  
Ժանգոտած ու գուլ են մեր թրերը  
Տւէք բեհեղեայ մեզ ձեր շապիկը,  
Որ մենք փաթաթենք մեր մարզու վերքը,  
Վիրակապ հիւսէք դուր ձեր մազերից,  
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»:  
  
 Թէ ես լինէի՛ հարուսա մեծատուն,  
Մնառուկներս լի սոկով, արծաթով,  
Շատուրի նման ես չէի լինիլ  
Երբէք ազգասէր ունայն խօսքերով,  
Շամպանեայ գինու, անմահ խաչի տեղ՝  
Կառնէի առատ գնդակ ու վատօդ,  
Արծակ համարձակ կերթայի հանդէս  
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:  
  
 Թէ ես լինէի մի երկրի իշխան,  
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման—  
Շուտաքայլ երթալ գէպի Հայաստան,

Խղճուկ հայ ազգին լինել օգնական:  
Եւրոպ, Ասիա արեան գետերը  
Կը վագեցնէի հեղեղի նման,  
Մինչև որ թագ, զահ ու ազատ կրօն  
Ինձանից չստանար թշւառ Հայաստան,  
  
 Բայց եթէ մի օր, մի ժամ, մի ըոսէ  
Աստւած լինէի մեր հողագնդին,  
Ի՞նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի  
Մեր արիւնարբու թշնամեաց գնդին,  
Նենգւ... թիւրք մոլի, պարիկ սիերիմ,  
Դարևոր սոսի, դու յոյն կրօնամու,  
Գիրցէք որ իմ սուր երկսայրի սրից  
Անջսաս չի մնալ ոչ մին ձեր որդին:

Դամառ-Քարիւլ



## ՏԱՅԿԱՀԱՅ ԶԻՆՈՐԻ ԵՐԳԸ

Աւեր դասնար Հասան-Ղալէն,  
Կրակն ընկնի թիւրքի բալէն  
Տանը թողին մայլս լալէն,  
Խաբար առէք վիրաւորէն:  
  
 Հասան-Ղալի դուռը բացին,  
Հայի տղոց առաջ քցին,  
Կամենդանան էր գերմանացին,  
Խաբար առէք վիրաւորէն:

Առաւոտեան լուսաբացին,  
Հայ տղերանց ջոկոտեցին,

Զէնքեր ձեռներից խլեցին,  
Խաբար առէք վիրաւորէն:  
Անտէր մնայ Հասան-Ղալէն,  
Սատկի Էնտէր փաշի բալէն,  
Եսրս մնաց տանը լալէն.  
Խաբար առէք վիրաւորէն:



## ՕՐՈՐ

Ննջեա, որդեակ, անուշ քնով,  
Օրօր կասեմ ու նանի,  
Քնոյ հերշտակն իր թմերով  
Քո երեսին հով կանի:

— Օրօր, օրօր իմ զաւակիս,  
Օրօր կասեմ հրեշտակիս:

Ննջեա-ննջա, անոյշ զաւաէ,  
Շուտ մեծացիր ու մարդ զառ,  
Լեր պիտանի հայրենիքիդ,  
Հայրենիքիդ քո թշւառ:

Օրօր, օրօր...

Գիտես արդեօք ով էր պապը,  
Եւ ինչ գործեր նա արաւ.  
Նա իր անմահ գործերով  
Հայրենիքին փառք բերաւ:

Օրօր, օրօր... և այլն:

Քո անունն էլ նորա պէս է,  
Դու էլ նորան նմանիր,

Նորա տւած օրինակով  
Հայրենիքիդ ծառայիր:

Օրօր, օրօր... և այլն:

Դէհ, մեծացիր ու քաջացիր,  
Մեր տան վրայ մտածիր,  
Չեռքէդ եկած ամեն բարիք  
Նրանից մի խնայիր:

Ա. Մամիկոնեան



## ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկինք-գետին տենչավառ,  
Սուրբ անունդ պիտի յիշւի գարեց-դաբ  
Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտ սողան իրենց բունը  
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը,  
Զը ցամաքի մինչ յաւիտեան Անդրանիկ,

Հայոց կուսանք դափնեա պսակ թող հիւսեն,  
Թնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն,  
Գոհարներով անվախ կուրծքդ զարգարեն,  
Կեցցէս յաւէտ դու անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,  
Թող գայլայլեն գիշեր ցերեկ անդադար,  
Անյաղթ մնաս դու քաջ կուի սիրահար,  
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



## ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ծոր ընկած մէկ չոր թփի տակ  
Դետնին սայելով մնացել եմ նստած,  
Զեռա ծոցումս զլուխս մէկ լեռ քարի  
Տւած՝ լալիս եմ, օրս խաւարած:

Ամպելն առաջիս, սարերն ետեիս,  
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,  
Աղի արտասունքով էրւած, խորոված,  
Երեսիդ նայեմ մնամ, քարացած:

Ծնող, ազգականք հեռու ինձանից,  
Լուսնին նայելով ձեր սէրն յիշելով,  
Եարաբ Բըր կըլի, որ ես ձեզանից  
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով.

Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով,  
Մէկ դուշ, որ գլխիս պտիտ է գալիս,  
Թէ երբ մէկ խապար կը հասնի ինձ բարով,  
Հոգոց հառելով.

«Նազլու, իմ նազլու, ասսմաս նազլու,  
Սիրտս խորովի՞ անունդ յիշելով,  
Նազլու, իմ նազլու, հրաշալի նազլու,  
Աղասին քեզ տայ իր յետին բարով:

Սարերի դօշին, ձորերի միջին,  
Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,  
Երեսիցդ զրկւած, քո սիրով մաշւած  
Տատրակի նման փշի վրայ նստած:  
Նազլու, իմ նազլու, մէկ շունչս է մնացել,  
Ուկերքս քրքրւել աչքերս խաւարել

Թնդ մէկ շունչս առնեմ յետոյ հող մտնեմ,  
Դժոխիքն էլ տանեն՝ ես հանգիստ կըլինեմ:

Քեզ եմ մնում, քո ջանին մեռնեմ,  
Հող ու գերեզման ես վրէս ունեմ.  
Քանց իմ սառը մարմին էլ ինչ գերեզման  
Իսձի պէտք կուզայ, երեսիդ դուրբան:

Խ. Արովեան

## ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ

Նպատակիս գէթ մի մասը կատարւէ,  
Եարալի բըլբուլ եմ:  
Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ  
Եար արի, տուտ արի, շուտ արի, եարալու  
Բըլբուլ.

Սարերի գիւղն եմ:

Ա՛խ իմ դարզս շատացել է չեմ կարող,  
Եարալի բըլբուլ եմ,  
Դարդի ձեռքից որ ջուրն ընկնեմ ազատւեմ.  
Տուն, արի, շուտ արի, եարալի բըլբուլ եմ,  
Սարերի գիւղն եմ:

Ա՛խ, անբախտ հայողուկիս, Տէր իմ, դու խղճայ  
Եարալի բըլբուլ եմ,  
Մի թողնիր թուրքի գնդակով դուք գնամ  
կորչեմ,  
Եար արի, տուն արի, շուտ արի բըլբուլ եմ,  
Սարերի գիւղն եմ:

• • • •

## ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Իմ թշնամիքս ես օրհնում եմ.  
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անզին ընկեր,  
Չգնահատւած ոչ ոքից:  
Բայց հաւաստեաւ անձնանւէր,  
Ազգիս մշակ կը հաշւիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանու  
Անդաւաճան, ջերմ սիրով,  
Ես սիրել եմ իմ հայրենիք,  
Գնա՞ն դու նոյն շաւզով:

Խեղճութիւնը հայոց ազգի  
Կարեկցարար մտածիր,  
Ուկէ գրքոյկն եղիշէի  
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան  
Ազատ կամքով ու խղճով.  
Այնտեղ Վարդան, անման Վարդան,  
Իր խնկելի քաջերով:

Հայրենիք, — սեղան սրբութեան —  
Ես Աստուծոյ առջե,  
Շատ կաղաչեմ, շատ կարտասւեմ,  
Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահս մօտէ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Որովհետեւ կիղմա արդար է  
Ճշմաբութեան ջատագով:

**Ս. Շահապիզ**



## Ս Օ Ց Ի Ա Լ Ի Զ Մ

Համբոյը Դըրօշիր կարմիր, անվեհեր  
Որ միայն շատ վեր, վեր է ծածանում,  
Փառք քեզի, նըրանց՝ որ գիտեն կըուել,  
Դըրօշը կըրել պայծառ Արեուն...

Իո իդէալին անո քանիշան են  
Իրանց թանկագին կեանքերը գոհում,  
Վաղը յանուն քեզ ովքեր կը քայլեն,  
Միշտ քեզի համար կըուի փոթորկում...

Խաղաղութիւն միշտ նըրանց՝ որ ահա  
Քո սիրով մեռան անեկ պայքարով,  
Հողը նըրանց թաղ ծանըը չի թըւայ,  
Մեծ Օրւան նըրանք կը սովասեն յոյսով:

Ուսպիհուու դժն... դուն պիտի յաղթես  
Եւ տիրողների ոյժը գարշելի  
Մի մեծ շարժումով պիտի կործանես,  
Փառք կըուողներին և փառք, փառք քեզի...

Օ՛, դուն իմ սիրան ես, իմ կեանքը, հոգին,  
Ես լըսում եմ միշտ մեծ երգը ահա,  
«Իմ գըրօշակը տարեք Աղեին,  
Տարեք այն ազատ բարձունքին վըրայ»...

Նայիր, ովքե՞ր են յաւիտեմն քայլում,  
Նըրանք չը գիտեն նահանջը երբէք,  
Օ՛, դուն նըրանց միշտ մեծ երգդ ես ասում.  
— «Դէպի Յաղթանակ դէհ, քայլէք, քայլէք...

Ա..Ե.



## ՈՐՍԿԱՆ ԱԽԹԷՐ

— «Որսկան աղպէր, սարէն կուգաս,  
Սարի մարալ կը փընտրես.  
Ասա, եարաբ դուն չտեսամը,  
Իմ մարալս իմ բալէս:  
Դարդի ձեռքէն սարերն ընկաւ  
Իմ մարալս, իմ բալէս,  
Գլուխն առաւ քարերն ընկաւ,  
Իմ ծաղկիս իմ լալէս»...

— Տեսայ, քուրիկ նաշխուն բալէդ,  
Կարմիր կանանջն է կապեր,  
Սիրած եարի համբոյրի տեղ  
Սըրտին վարդեր են ծլեր:

— «Որսկան աղպէր, ասա եարաբ,  
Ո՞վ է հարսը իմ բալիս,  
Ո՞վ է գրկում չոր զլուխը  
Իմ մարալիս իմ լալիս:

— Տեսայ քուրիկ դարդոտ բալէդ,  
Քարըն է զըրեր բարձի տեղ.  
Ասուշ քընով տաք գընդակն է  
Կըրծքում զըրկեր եարի տեղ:

Սարի մարմանդ հովկ է շոյում  
Ճակատի փունջը մարալիդ,  
Ծաղիկներն են վըրան սըդում,  
Աղիդ բալիդ, խեղճ լալիդ...

Ա. Բատիակիսան



## ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴՐԵՍ...

Դու գով ինգրես, մայր իմ անուշ,  
Եկ մի զողար, մօտեցիր հոռ  
Անլաց աչօք գիտէ զորդիդ  
Եւ իւր վէրքերն արիւնահոս,

Թրքաց մայրեր թող լան ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:  
Խնչպէս երբեմն օրրանիս մէջ,  
Կակուղ ձեռամբ փայփայելով  
Մանկիկ մարմնոյս հանդիսատ տայիր  
Իբրև հրեշտակ նւազելով:

Զիս հանգչեցուր ի հող ու դուն  
Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

«Նորեկ որդւոյս կենաց ալին  
Զեղի համար փայլի, Հայեր».  
Այսպէս յայնժամ դու կերպէիր  
Օրօրոցիս նստած քովեր:

Անոնց համար շիջաւ և դուն  
Սւրախ լուրեր տար ի մեր տուն:

## ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք թշւառ անտէր,  
Մեր թշնամուց ոտնակոխ,  
իւր որդիքը արդ կանչում են,  
Հանել իւր վրէժ քէն ու ոխ,

«Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապւած,  
իւր քաջ ուրգուց սուրբ արիւնով  
Պիտի լինի ազատաւած:

«Ահա եղբայր, քեզ մի դրօշ  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Դիշերները ես քուն չեղայ,  
Սրտասունըով լւացի:

«Նայիր նորան երեք գոյնով,  
Նւիրական մեր նշան,  
Թող փողինդի թշնամու դէմ,  
Թող կործանուի Աւարիան:

«Ինչքան կին մարդ մի թոյլ էտկ  
Պատերազմի գործերում,  
Կարէ օգնել իւր եղօրը,  
Զանց չարեցի քո սիրուն:

«Ահա իմ գործ, ահա դրօշ  
Շուտ ձի հեծիր քաջի պէս,  
Գնա փրկիր մեր հայրենիք—  
Պատերազմի վառ հանդէս:

\*Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,  
Սակայն մայր իմ, նայէ չորս դիս,  
Արիւնառուշտ թիւրքերը տէս  
Հազարներով փուած գետին:

Կերաւ զանոնք մեր սուրն ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Որպէս վիշապ մուրնչելով,  
Յանկարծ մեզ վրայ յարձակեցան,  
Ճնցեց Զէյթուն գլուխը ժայռոտ,  
Իւր վից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկաւ ձորք մեր ու դուն  
Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Ու ծափ զարկին մեր հարց ստւերք,  
Զի չէ մեռած Հայոց կրակ,  
Ու ցնծացին այնչափ զոհեր,  
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ:

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն  
Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,  
Հատուցանես զայն սիրունուս,  
Վերջին անգամ զրկեմ մեր հող,  
Ուր արդ կիջնեմ ի ծոցն անլոյս:

Խաչ մը տնկէ վրաս ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անդամ պիտ մեռնի,  
Բայց երանի, որ իւր ազգի  
Ազատութեան կը զոհւի:

«Գնա եղայր, Աստւած քեզ յոյս,  
Ազգի սէրը քաջալեր.  
Գնա թէն չեմ կարող գալ  
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

«Գնա, մեռիր դու քաջի պէս,  
Թող չտեսնէ թշնամին  
Թո թիկոնքը, թող նա չասէ  
Թէ վատ է իտալացին».

Ասաց, տւեց օրիորդը,  
Իւր եղբօրը մի դրօշ,  
Մետաքսից էր, ազնիւ գործած,  
Ուր երեք գոյն կար որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց,  
Իւր սիրական քնքոյշ քոյր,  
Առաւ զէնքը, սուր, հրացան,  
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

Թոյրիկ, կանչեց քաջ պատանին,  
Մնաս բարեաւ, սիրական,  
Այս զբօշակին պիտի նայի,  
Ամբողջ բանակ իտալիան:

Ասաց, վազեց դէպի հանդէս,  
Աստրիացոց յանդիման,

Իւր արիւնով զնել յաւէրժ,  
Ազատութիւն իտալիան:

Ո՞հ իմ սիրաը կտրատում է  
Տեսնելով այսպէս սէրը  
Դէպի թշւառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:

Ո՞հ արտասուքս ինձ խեղում են,  
Էլ չեմ կարող բան խօսել,  
Զէ, թշւառ չէ իտալիան,  
Եթէ կանայք այսպէս են:

Ս. Նալբանդեան



## ԿՈՌԻՆԿԻՆ

Բարով եկար սիրուն կուռնկ,  
Խնչ լուր բերիր հայրենիքէս,  
Խօսիր ինձ հետ աղատօրէն,  
Կեանքս կը նւիրեմ ես քեզ,

Տեսամը իմ հայրենեաց տունը,  
Գեղեցիկ զարդարւած բոյնը,  
Նորա սիրոն տանջւում եմ,  
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսամը մեր լեռները,  
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը.  
Այն լեռներու պաշտպանողը,  
Արծւի կորիւնի նետերը:

Տեսմք մեր փոքրիկ բուրաստան,  
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան  
Եղեմական դրախտավայր,  
Նա կոչում է Հայաստան:

Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,  
Միջազ, ինչ կը սպասես ի գուը,  
Մը առնեմ իմ թևերուն,  
Գնանք այնտեղ ուրախացուր:



## ԿՈՒԵՑԵՔ ՏՌԵՐՔ

Կուեցէք տղերք, կուեցէք քաջ-քաջ,  
Անվեհեր կանգնած թշնամու առաջ,  
Յանկալի է մեղ միշտ աղնիւ մահը,  
Հեռու մեղանից ոսոխի ահը,  
Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,  
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Ահա թշնամին փախչի սարսափած,  
Ահա զիակներ արեամբ շաղաղւած,  
Կրակ տեղացէք, անգաղար կրակ,  
Փառք մեր զէնքերին, առատ է գնդակ.  
Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,  
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Մենք աօնախմբենք մեր նախնի քաջեր,  
Մեզի կ'սպասեն մեր սէդ եղբայրներ,  
Ազատ չենք ծնւած, գէթ մենախնք ազատ,  
Եւ մեր սիրտ հոգին պահենք անարտ.  
Դէ կուէք տղերք մինչև շունչ վերջին,  
Արժանի լինինք փառաց պակին:

—Մեռնինք յուսալով, մերն է ապագան,  
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայտատան,  
Այսպէս յորդորեց և ընկաւ արին,  
Թողնելով մեղնում յիշատակ բարի.  
Ահեղ կուի մէջ աննման հերոս,  
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:



## ԱՀԱ ՄԱՅՐԻԿ

Ահա մայրիկ՝ ես գնում եմ,  
Ազգիս համար զոհւելու  
Քաջ ընկերներով միասին,  
Անգութ քրդեր ջարդելու:

Երբոր մայր իմ, Սասուն եկար,  
Ինձի որտեղ փնտուցիր.  
Գերեզմանիս վրայ գալով,  
Ի՞նչ ասացիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վրայ,  
Ի՞նչ անուշիկ հոտ կուգայ.  
Այսուհետև անուշ մայրիկ,  
Ինձմէն քեզ օգուտ չկայ:

Գերեզմանիս հողի վերայ,  
Յանէ ծաղիկ, իմ մայրիկ,  
Յանէ ծաղիկ, թափէ արցունք,  
Երիտասարդ եմ, մայրիկ:

Գերեզմանիս քարի վերայ,  
Խոշոր տառով գրեցէք—  
«Այսուհետև հայ մանուկներ,  
Ազատութեան զոհւեցէք»:

## ԹԱՂՈՒՄՆ ՔԱԶՈՐԴՈՅՆ

Ոչ փող զարկինք, ոչ արձագանք լեռնասոյդ  
Սարէ ի սար չարաշը ուկ տարին լուր,  
Ու չերպեցինք ողբոց երգերը սրտայոյզ,  
Երբ պատանւոյն բացինք մոայլ փոսին դուռ:

Գիշերական մունջ ստւերներ շուրջ կային,  
Երբ հրացանի կոթով զնող փորեցինք,  
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,  
Սուգ էր պատեր զդաշտ, բլուր և երկին:

Պէտք չէր դագաղ և ոչ ճերմակ պատանքներ,  
Որով գոցէր ազատորդին, քաջ որդին.  
Նա յետ մարտին կարծես յոդնած կը հանգչէր  
Ու վերարկուն կարմիր, բաւ էր իր անձին:

Անձայն ու կարմ ննջեցելոց մը զըուցեց  
Մեր քաջ Տէրտէրն, զինւոր Հայոց ու Աստուծոյ  
Գովեց զմահն և զքաջութիւնն իր օրհնեց՝  
Թոյլ չի տւաւ հառաջմ ու ճիչ հանելոյ:

Բայց երբ գլուխն, ի բարձ գրինք հողաշէն,  
Տեսանք զգել ճակտին ու վէրքն պայծառ.  
Մէյմ ալ քամի յանկարծ փչեց ցրտաշունչ,  
Լուսին շողերն եկաւ զոցեց մթին ամպ,  
Ու մեր սարերն զերթ ուրւականք անմոռւնչ  
Սև գլուխնին տնկած դիտեն ապշութեամբ:

Յայնժամ ցուրտ, ցուրտ հող լեցուցինք իւր  
Վրան  
Խաչ մը դրինք, ինչպէս իր մօր պատւէր ետ,

## ՎԱՆԵՑԻՈՑ ԶՈՒՆԻԱԳԸ

Բաւ է, եղրայրք, վիզը ճկել  
Ողորմելի երևիւ,  
Ժամանակը հասել է,  
Հայ գրօշակին ծառայիլ:

Հայոց լերինք թնդ թնդան,  
Հայոց բերանք թնդ գոռան,  
Հայաստանի դաշտերում,  
Քաջ հայերու զիլ «ուռան»:

Արիւն վոթէ թող հայը,  
Աղաղակէ միշտ ուռան,  
Մեր թշնամին այսուհետ,  
Սրտի վախէն թող դողայ:

Այսուհետև արտասուք  
Վախիոտները թնդ հեղուն,  
Հայքըս արդէն պատրաստ ենք,  
Վոթել աղնիւ մեր արիւն:

Ու չենք դադրիլ վոթելու  
Մեր հայ, աղնիւ արիւնը,  
Մինչև ազգը չի ստանայ  
Իրա ազատութիւնը:

Ախ ու վախ մենք մոռացանք,  
Այժմ գիտենք մենք ուռան,  
Հայք, գոչեցէք միշտ ուռան,  
Որ թշնամին մեր դողայ:

Ո՞չ այլ շքեղ արձանագիր, ոչ տապան,  
Զինք մենակ թողուցինք իր փառքին հետ:

ՊԵՀԿՐԱՅԻՒԹԻՒՆ



## ԱԼԱԳԵԱԶԻՆ

Սկզբութ ամպեր ճակտիդ դիդւն,  
Դուման հագար, Ալագեազ,  
Սրտումս արև էլ չի ծաղկում,  
Սիրտս էլ դուման, Ալագեազ:

Զառ փէշերդ անցայ, տեսայ,  
Առանց դարդի սիրտ չը կար.  
Ա՛խ, իմ դարդը ջան Ալագեազ  
իմ դարդիս պէս հէջ չը կար...

— էյ, Մանթաշի նըշմուն հաւքեր,  
իմ դարդը որ՝ ձերն եղնէր,  
Զեր էդ զառ-վառ խառ-փետուրներ  
կը սնային, քանց գիշեր:

— էյ, Մանթաշի մարմանդ հովեր,  
իմ դարդս որ՝ ձերն եղնէր,  
Զեր ծաղկանուշ բուրմունքը նուշ  
թոյն ու տօթի կը փօխւէր:

Հէյ վմխ... կոտրան իմ թեհերըս,  
Ընկայ գիրկըդ, Ալագեազ,  
Ա՛խ, մեծ սըրտիդ սըրմեմ սիրտըս,  
Լամ, արուն լամ, Ալագեազ...

Ա. Խահակեան



## ԿԵՑՔ ՊԱՅՔԱՐԾ

«Հոգիիս մեջն եվ դորք որ մեռավ  
Ապառուրեան համար...»

Ես լաց չեմ լինում, բնկեր, քնզ համար,  
Թռղ յաղթւածները արտասուք թափեն,  
Թռղ նըրանք հեծեն՝ որոնք վատարաը  
Շըղթաների տակ համակերպւում են:

Օ՛, Ես հըպալրտ եմ, որովհետեւ դուն  
Միշտ վեր բըռնեցիր զըրօշը կըռւի,  
Կեցցէ պայքարը, կեցցէ յաղթութիւն,  
Եւ բըռնակալի թռղ միշտ անիծւի...

Դուն էլ չես խօսում, խօսում են սակայն  
Քո կըռիները յաղթանակիդ հետ,  
Կարմիր զըրօշը ազատազրութիւն  
Եւ քո մեծ փառքը յափտեան անհետ...

Խաղաղութիւն քեզ, ես երբեք չեմ լաց,  
Քո վառ վըրէժը ահա վեհ կուրծքիս,  
Քեզ համար խօսքը շըրթներիս վըրայ  
sit tibi terra levis.

Ա. Խ.



## ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՉԾ

Ով որ քաջ է, ինձ կսպասէ,  
Արդէն ժամանակն է, թող գայ,  
Մահ պատերազմի օրհամ է,  
Ով որ անվախ քաջ է թող գայ:

Թափենք գնդակ ինչպէս տարափ,  
Թշնամին լինի յուսախար,  
Տարածենք մահ—ահ ու սարսափ,  
Ով որ տղամարդ է, թող գայ:

Մերթ Սասուն, մերթ սարը Սիփան,  
Կոփւ կունենանք անխափան,  
Մինչև որ փրկենք Հայաստան,  
Այս յոյս ունեցողը թող գայ:

Կամ կուինք, պարպինք, վերջանանք,  
Կամ զէնքով փրկութիւն ստանանք,  
Բաւական է գերի մնանք,  
Ազնիւ մտածողը թող գայ:

Երկաթի մարդ քարի որդի,  
Վրէժինդիր լինի թիւրքին,  
Աշխուժով քարի տակ չոքի,  
Անսխալ խփողը թող գայ:

Սուրը մէջքին, հրացան ուսին,  
Համարձակ դիմէ օրհասին,  
Մահւան պատանքը միասին,  
Մահ արհամարողը թող գայ:

Հինգ դար է որ մեղ կսպանեն,  
Բռնի կրօնից կը հանեն,  
Կին ու աղջիկներս կը տանեն,  
Նամուս ունեցողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կոփւ,  
Զէնքով պէտք է մաքրել հաշիւ,

Յարգել զէնքը տալ մեծ պատիւ,  
Անդրանիկին սիրողը թող գայ:

Ֆահրան



## ՆԻԷՐ ՀԱՅԴՈՒԿԻՆ

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ,  
Հայ օրիորդը ինձ ընծայեց.  
Հեռու երկրից անկեղծ նւէր,  
Եր քոյրերուն ուղարկեց:

Ասաց. «Ճնէր այդ փունջն ու ահա,  
Թէ չի անցնիլ էլ երկար,  
Կուի դաշտում հարս ու փեսայ,  
Կը հանդիպենք մենք իրար:

Կոփւ կուտանք, կոփւ արդար,  
Կոփւ վերջին ճպնական,  
Գոտեպնդւած, հերոսաբար  
Ու կազատենք Հայաստան:

Դուրս ցայտեցին արցունքներ տաք,  
Իմ աչքերից այդ պահուն,  
Լսում էի կարծես անյագ,  
Ազատութեան պատգամին:

Եւ երդւեցի տանել փունջն այն,  
Դէպի կարմիր Հայաստան,  
Ուր վիրաւոր հայերն համայն  
Սպասում են փրկութեան:



## ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար մռւթ գիշեր էր,  
Մի խումբ կերթար արագ-արագ.  
Տևանք որ քաջ Խանի խումբն էր,  
Զինած էին բոլոր նրանք:  
  
 Կեանըները ազգին նտիրած,  
Կորիճ Խանն առաջ ընկած,  
Գնում էին տաճկաց սահման,  
Թռչում էին ինչպէս կրակ:  
  
 Հրացանները ուսերին,  
Դրօշակը պարզել էին.  
Գնում էին ուրախ զւարթ,  
Ազատութիւն երգում էին:  
  
 Մութ անտառից անցնում էին,  
Ամեն մէկը առիւծ էին,  
Նժոյդ ձիմները նստած.  
Մերկ սուրերը քաշել էին:  
  
 Երբ քաջ Խանը ելաւ Բասեն,  
Թնդանօթներ արձակեցին,  
Հայ քաջերի մօիններից  
Գնդակները գոռպուացին:

## ԿԱՐՕՏ

Լուսնեակ գիշերին ես տեսայ նրան՝  
Նազուկ քայլւածքով ինձ մօտ էր գալիս.  
Փայլուն աստղերի ցոլքը դիւթական,  
Նորա երեսին շողին էր տալիս:

Երկինքն էր խօսում նրա աչքերում՝  
Երազուն, փայլուն, ասղրելու տենչով,  
Ծով էր ծաւալւում լուռ հայեացքներում  
Հեղիկ ու մրգմիկ կախարդ ժպիտով...

Ո՞վ դու, կոյս չքնաղ, բաղդն աշխարհի,  
Քո մէջն եմ վնտրում գաղանիքը կեանքիս  
Արդեօք դու չես այն աստղն երկնի  
Որ լոյս է սփոռում իմ կարօտ սրտիս  
Յակ. Ֆէր-Յառօւրինեան



## ՏԱՆՉԱՄՆԵՐԻ ԵՐԳԸ

«Սուա՞զ, գլափ սեղծագործ Ա.»  
Խատաներ, գլափ Արօպոյը Բրա-  
ւունի և Արգարուրեան...»

Մենք մեր արիւով, մեր սուրբ քըլտինքով...  
Ահա գալիս ենք երգը նըզովքի  
Մեր տառապանքի ծոցից խըլելով,  
Ահա մենք հըպարտ, ահա մենք ոտքի:  
  
 Ահա գալիս ենք մեր միշտ ջախջախւած  
Խեղճ ոսկորների տըխմուր ձայներով,  
Եւ մեր վիրաւոր կուրծքերը բացմած,  
Ահա գալիս ենք անհուն տանջանքով...

Մեզ չէք ճանաչում... Ահա մեր ուսին  
Գալիս ենք ցաւի խաչերը դըրած,  
Շատ ենք տենչացել խաչւած Յիսուսին...  
Ահա գալիս ենք փուշով պըսակւած...

— 70 —

Մեղ չէք ճանաչում... Անիրաւութեան  
Ծանըր բեռին տակ՝ կոր թիկունքներով  
Ահա գալի՛ս ենք... անվերջ, յաւիտեան,  
Բիւրաւոր անդամ ծակւմծ կողերով...

Մեղ չէք ճանաչում... պիղծ շըղթաների  
Յաղթութեան երգով գալի՛ս ենք ահա,  
Թանձըր մութին մէջ յաւիտեան գերի՝  
Սև անէծքը մեր շըրթունքին վըրա...

Մեղ չէք ճանաչում... Կարծուը կեանքի,  
Օ՛, ազա՛տ կեանքի, մեր սրտում վառաւծ,  
Գալի՛ս ենք ահա ծով-տառապանքի  
Անիծւած բովում այրւա՛ծ, քըրքըրւա՛ծ...

Մեղ չէք ճանաչում... Մենք նըրանք ենք՝ որ  
Ծախու են հանւած կեանքի շուկայում,  
Մենք միշտ ոտնակո՛խ, մենք միշտ ահաւոր,  
Հըսկայ տանջանքի կառքին ենք լըծւում...

Մենք շա՞տ ենք ըմպել լեղին տանջանքի,  
Ահա՝ որ խե՞ղճ ենք, ահա տանջըւած,  
Մենք մարտիրուսներն Մեծ Աշխատանքի՝  
Ահա՝ քաղցած ենք, ու միշտ ծարաւած...

Այդպէ՛ս ենք գալի՛ս, ցաւո՛վ, քրտինքո՛վ,  
Ծարաւ ու քաղցա՞ծ, մեղ չէք ճանաչում,  
Գալի՛ս ենք ահա... կարմիր զայրոյթով,  
Օ՛, երնէկ այնքա՞ն ով չէ տանըջւում...

Այսպէ՛ս ենք գալի՛ս, արդար ցասումով,  
Կըուի գըրօշը մեր ուսին գըրած...

Եւ շըղթաների աղտոտ մահերգով,  
Ահա՝ գալի՛ս ենք ձեզ դէմ ծառացա՛ծ...

Այդպէ՛ս ենք գալիս, երգով վըրէժի՛  
Եւ ատելութեան, և մեծ երդումով,  
Գալի՛ս ենք երգով հաւասարների,  
Իդէաների անըսպառ ոյժով...

Լզգոյշ... գալի՛ս ենք, գալի՛ս ենք ահա  
Ապստամբութեան կարմիր երգերո՛վ...  
Տանջանքե խաչը մեր ուսին վըայ,  
Այդպէ՛ս ենք գալիս... մեծ յաղթանակո՛վ...

Ա. Ե.



## ԴԱՍԻԹԱՆ

Հաղար ինն հարիւր չորս թւականին  
Տաւրոսի լեռներում ժայթքեց նոր կրակ.  
Թնդացին լեռները Մայր-Հայաստանի,  
Փայլեց հերոսութեան կապոյտ դրօշակ:

Բանտից ու կապանքից աղատւած ոմանք՝  
Անւանի Սասնոյ մէջ որոնեցին կեանք,  
Տեղական քաջերից գտնելով յարգանք՝  
Հանգստանալ ուղեցին մէկ ժամանակ:

Հայ քաջերը աւելացան օր-օրի,  
Նըրանց թիւը հասաւ մինչև հարիւրի,  
Ամենքն էլ միասիրտ ու միահոգի,  
Զինավարժութեան մէջ հմուտ, ընդունակ:  
Զինւած ու պատրաստւած՝ ողջը ժրաջան,  
Ունէին հեռածիգ բանուկ հրացան,

Երդում արին Սասնեցոց հետ միացան,  
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ:

Թագմագէտ Անդրանիկը բաղմաշահ՝  
Եղաւ կառավարիչ հայ զօրքին անտահ,  
Չորս գլխաւոր քաջեր ընտրեց թիկնապահ  
Մուրադ, Հրայր, Վահան և սեպուհ Արշակ:

Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտե,  
Դործը չմեծացաւ, անցկացաւ թիթե  
Անձնապաշտպանութեան տւին կուի ձե,  
Թուրքերու մէջ բարձրացաւ ձիչ, աղաղակ:

Այս լուրը սուլթանի ականջին հասաւ,  
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ,  
Սպառնալով այսպէս հրաման տւաւ  
«Խրատէ հայերուի, ուղարկէ կոնդակ»:

Պատրիարք պատասխանեց խոր հոգուց,  
Սաւ. — «Ես ոչինչ եմ այսօր թէ էզուց,  
Հեղինակութիւնս ընկել է վաղուց,  
Քաղցր խօսքս նրանց թւում է ներհակ»:

Սուլթանը ոյլայլւեց տխուր սրտմտած,  
Տակն ու վրայ եղաւ, սաստիկ ցաւ զզաց,  
Իւր նախարարներուն ասաւ բարկացած  
«Բիթլիսի վալիին տալ հրովարտակ»:

Վալին տիրոջ հրովարտակը կտրդաց,  
Հայերուն կոտորել հասկացաւ, զզաց,  
Առաքելոց վանքի վանահօքն ասաց  
«Արի գնա, Սասուն, եղիր պատրիարք,

«Գնա, խրատէ քու հայ ժողովուրդին,  
Վնասս չհասցնեն թուրքին ու քրդին.  
Ասա՝ չհետեւին այլոց խորհրդին,  
Բոլորին կը ջարդեմ, կանեմ շան-սատակ»:

Վարդապետը գնաց. դատարկ ետ դարձաւ  
Նրա քարոզներուն մի լսող չեղաւ,  
Աճապարեց վալին, շատ գորք մօտ արաւ  
Խառն ի խուռն քուրդ ու խուժան ելուզակ:

Մանր, խոշոր թնդանօթներ մօտ քսան.  
Թագմամթերքը առատ բաւական,  
Թուրքաց զօրքի թիւը կը լինէր այսքան  
Քսան հազար ձիաւոր ու հետեակ.

Առիւծ Գէորգ չաւուշ, կայծակ և վահան՝  
Աւետիսի հետ հասան օգնութեան,  
Կանգնիցին թուրք զօրքի դէմը յանդիման՝  
Հայոց կտրիճները անվախ, համարձակ:

Վալին ասաւ Անդրանիկին. — «Ո՞վ տիմար,  
Անփորձ ճնձղուկի պէս թակարդը ընկար.  
Զգիտես ում դէմը ասպարէզ մտար.  
Ես բաղէ եմ, դու՝ մի չնչին կաչաղակ»:

Անդրանիկ ասաւ. «Հոտած խելքի ծնվ,  
Խօսքերդ քու գլխիդ կը բերեմ խոռվ,  
Բուրդդ բարերար կը հանեմ շուտով,  
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ»:

Վալին ասաւ. — «Ազլային եմ ես հիմա,  
Իսկապէս քո հոգիդ առնելու եկայ.

Ո՞ւմ վրայ ես դրել յոյսդ, ինձ ասա,  
Ով դու ամբարտաւան, դու գող, աւագակ»:

Անդրանիկն ասաւ.—«Շատ բարձրամիտ ես,  
Գիշակեր բորենի մէկ պարազիտ ես,  
Անդէն խեղճ հայերուն կոտորել գիտես,  
Քաջերու մօտ դու կդանաս նապաստակ»:

Վալին ասաւ.—«Արի անձնատուր եղիք,  
Լսէ թագաւորիդ, զէնքերդ վար դիր,  
Ողջիդ կը դարձնեմ ես հող ու մոխիր,  
Անդադար մէկ ամիս կարձակեմ գնդակ»:

Անդրանիկն ասաւ.—«Լսիր, ով փաշա,  
Մեզ համար մեռնիլ կայ, յանձնուիլ չկայ,  
Արա, մի խնայեր ձեռքէդ ինչ կու գայ,  
Շատ ենք լսել, տեսել մենք քամու տոպղրակ»:

Վալին ասաւ.—«Անգնրծ մի քանի լամուկ,  
Սրտեր էք պղտորում որպէս կեղտոտ մուկ,  
Զեղ նման խենթերու պատճառով յատուկ՝  
Դրախտ Անատօլը դարձաւ աւերակ»:

Անդրանիկն ասաւ.—«Մեզ հետ լաւ վարւիր,  
Եթէ շահիլ կուզես՝ ինքդ խոնարհւիր,  
Մինչև մեր պահանջը ձիշտ չկատարուի  
Մենք չենք դառնալ գահին հլու հպատակ»:

Վալին ասաւ.—«Ինձ չկարծես՝ մենակ եմ,  
Զօրք շատ ունեմ, ինչ անցքեր կան՝ կիսակեմ,  
Քսան թնդանօթներ մէկէն կարձակեմ:  
Բոլոր խմբերովդ կարցնիս գետնի տակ»:

Անդրանիկն ասաւ.—«Ես պիտի կռուիմ,  
Հայրենիքիս սիրոյն համար թող մեռնիմ.  
Քու հրազէնքերուդ գիմացը ունիմ  
Հրացայտ գործիքներ, պայմթող ուժանակ»:  
Վալին տեսաւ՝ չեն խոնարհւում հայերը,  
Իրանք՝ անվախ և հատու են զէնքերը՝  
Խրախուսեց, առաջ մղեց քրդերը,  
Բայց հայերուց կերան կատաղի ապտակ»:  
Չորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,  
Սար ու ձոր գզրդաց, գոռաց, թունդ ելաւ,  
Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ  
Հայերը ունեցան քսան նահատակ»:

Վալին փախաւ, զօրքն էլ իրան հետևեց,  
Անարգուած, անպատիւ դէպի Մուշ չուեց,  
Իջաւ դաշտը, անդէն հայոց ջարդ տուեց,  
Տեսաւ՝ Սամնեցոց հետ չի լինի կատակ»:

Հայերն էլ դիրքերը թողին հեռացան,  
Որ թուրքերը անդէն հայոց ջարդ չտան,  
Ցրուեցան ամենքը, մի տեղ պահուեցան,  
Մինչև որ կըծագէ մի նոր արեգակ»:

Հմուտ կառավարիչ, խելահաս վարպետ,  
Մահացու կրակից նա չկեցաւ ետ,  
Կեցցէ Անդրանիկը, ընկերներու հետ  
Բալոր աշխարհի մէջ ոտացան հոչակ»:

Զիւան, ուժեղի մօտ եթէ իմիդ լինի,  
Տկարին օդնելը դժուար չի թուի.  
Տնյ Աստուած, որ հայոց թեմն էլ էրնուի  
Անձրւ չգայ, քամին փշէ յաջողակ»:



Նիկը ՀԵԶՈՒԵԱՆ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ  
 Հնչակեան զինւոր ուժգին համարձակ,  
 Շողացուր միշտ սուր սուլեցուր գնդակ,  
 Առանց տատանման անվեհեր թափով,  
 Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ:  
 Նւիրիր կեանքդ քո եղբայրներին,  
 Զոհ բեր թշնամուդ քո կտրուկ սուրին,  
 Հակառակորդից դու մի երկնչիր,  
 Դեղ դարման եղիր արնոտ վէրքերին:  
 Զարութեան ոգու թոյնը սպանիչ,  
 Թող հեռու կենայ սրախցդ ով կտրիչ,  
 Իբրև զրօշակին հարազատ պաշտպան,  
 Ատիր միշտ ոխը քէն, որ է քայքայիչ:  
 Անխարդախ ոգով միշտ յառաջ գնա  
 Բոնակալ ուժը չնշելու ջանա,  
 Յեղափոխութեան թշնամու հանդէպ,  
 Եղիր անողորմ անդութ անխնայ:  
 Կտրիչ Հնչակեան ուժգին համարձակ,  
 Շողացուր միշտ սուր սուլեցուր գնդակ,  
 Յեղափոխութեան սրբազան դաշտում  
 Միայն այդ լինի քո վեհ նպատակ:



## ԵՐԱԶ

Ես լացի մի անուշ ձայն, —  
 Իմ ծերացած մօր մօտ էր.

Փայլեց նշով ուրախութեան,  
 Բայց ափսոս, որ երազ էր:  
 Կարկաչահոս աղքիւրն այնոտեղ,  
 Թաւալում էր մարգարիտ, —  
 Նա յստակ էր որպէս բիւրեղ,  
 Այն երազ էր ցնորամիտ:  
 Եւ մեղեղին տխուր, մայրենի  
 Յիշեց մանկութեան օրեր, —  
 Մօրս համբոյըն ես զգացի, —  
 Այս, ափսոս որ երազ էր.  
 Կուրծքին սեղմեց կարօտագին,  
 Աչքերս սրբեց — շատ թաց էր,  
 Բայց արտասուքս գնում էին,  
 Այս, այդ ինչու երազ էր.

Վ. Շահագիզ



## Կ Ռ Ո Ւ Ն Կ

Կոռւնկ ուստի կուզաս, ծառայ եմ ձայնիդ,  
 Կոռւնկ մեր տշխարհէն խարրիկ մը չունիս,  
 Մի վազիր երամիդ շուտով կը հանիս,  
 Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիս:  
 Թողեր եմ ու եկել մկներս ու այգիս,  
 Քանի որ այս կանսեմ կու քաղի ճողիս,  
 Կոռւնկ, պահ մի կացիր ձայնիկդ ի հողիս,  
 Կոռւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունիս,  
 Քեզ խարար հարցնողին չես տանիր տալապ,  
 Չայնիկդ անուշ կուզայ քան զջրի տոլապ,

Կոհննկ, Պազդադ իջնուս կամ թէ ի չալապ,  
Կոհննկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Ոչ զլուր գիտեմ և ոչ կիրակին,  
Զարկած է զիս շամփուր բռնած կրակին,  
Այրիւս չեմ հոգար ձեզնէ կարօտ եմ,  
Կոհննկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Պաղպագու կրուգս կերթաս ի Սահրաթ,  
Թղթիկ մը գրեմ տամ քեզ ամանաթ,  
Աստւած թող վկայ լինի քո վրադ  
Տարեալ հասոյցես զայն իմ սիրելեաց:

Գրել եմ մէջ թղթիս թէ հոս մնացի,  
Օրիկն ի օրեր աշէր չբացի,  
Սիրելիքս, ձեզանից կարօտ մնացի,  
Կոհննկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աստւորիս բաներ կամաց կամաց է,  
Եթէ Աստւած լսէ գոնակ մը բաց է,  
Ղարիբին սիրան է սուր աչքերն ի լաց է,  
Կոհննկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աստւած, քեզանէ ինզրեմ մուրվէթ ու քէրէմ,  
Ղտրիբին սիրան է խոց ջիկարն է վերէմ,  
Կերած հացն է լեղի ջուրն է հերեմ,  
Կոհննկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունիս:

Աշուն է մօտեցել գնալու ես թէտրիր,  
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր,  
Ինձ պատասխան չտւիր ելար ու գնացիր,  
Կոհննկ, մեր աշխարհէն գնա հեռացիր:



## ՑԱՆԿ

Երես

- |     |                             |    |
|-----|-----------------------------|----|
| 1.  | Մարսելիէզ (առւսերէն)        | 2  |
| 2.  | » (հայերէն)                 | 5  |
| 3.  | Մեր նահատակներին            | 10 |
| 4.  | Անվախ ընկերք ոտքի ելէք      | 12 |
| 5.  | Համազասպի երգը              | 14 |
| 6.  | Մեր երգը                    | 14 |
| 7.  | Թաղման քայլերդ              | 16 |
| 8.  | Հ. Յեղ. Դաշնակցութ. քայլերդ | 17 |
| 9.  | Առաջ, վեր կացէք             | 18 |
| 10. | *                           | 19 |
| 11. | Մենք պէտք է կրւենք          | 18 |
| 12. | Ազգային սահմանադր. երդ      | 20 |
| 13. | Վարշավեանկաշ                | 22 |
| 14. | Ի Շաւարշան դաշտին վրէժք     | 22 |
| 15. | Ազատն Աստւած                | 24 |
| 16. | Բոնակալներին.               | 25 |
| 17. | Լուր                        | 26 |
| 18. | ԴԱ Միա                      | 27 |
| 19. | Ինձ համար չէ                | 28 |
| 20. | Զայն տուր, ով ծովակ         | 29 |
| 21. | Կարկուտ տեղաց               | 30 |
| 22. | Շուշանիկ                    | 30 |
| 23. | Պանդխատի երդ                | 30 |
| 24. | Պետոյի յիշատակին            | 31 |
| 25. | Առաջ ընկերներ               | 32 |
| 26. | Մենք անկեզծ զինւոր ենք      | 33 |
| 27. | Պանդխատի ողջոյնը            | 34 |
| 28. | Տուր ձեռքդ ելբայր           | 35 |
| 29. | Հրաւէր ազատութեան           | 36 |
| 30. | Պարզիր աղբիւր               | 37 |
| 31. | Պանդուտա հայն               | 37 |

32.	Հայաստանի աւետարեր	38
33.	Բլբուն Աւարայրի	39
34.	Հայդուկի երգերից	39
35.	Զարթիր որդեակ	41
36.	Մայր և որդի	42
37.	Պարզ գիշեր	43
38.	Ես կուղեմ կուել	44
39.	Չախորդ օքերը	45
40.	Թէ իմ ալեռոր...	45
41.	Տաճկահայ զինւորի երգը	47
42.	Օրոր	48
43.	Անդրանիկին	49
44.	Աղասու երգը	50
45.	Նպատակիս գէթ մի մասը	51
46.	Ազնիւ ընկեր	52
47.	Սօցիալիզմ	53
48.	Որսկան ախալէր	54
49.	Դու զ՞նի խնդրես...	55
50.	Իտալացի աղջկայ երգը	57
51.	Կոռնելին	59
52.	Կուեցէք տղերք	60
53.	Ահա մայրիկ	61
54.	Վանեցւոց չունեագը	62
55.	Թագումն քաջորդոյն	63
56.	Ալագեազին	64
57.	Կեցցէ պայյօթարը	65
58.	Անդրանիկի կոչը	65
59.	Նւէր Հայդուկին	67
60.	Խանի երգը	68
61.	Կարօտ	68
62.	Տաճշւածների երգը	69
63.	Գասիթան	71
64.	Նւէր Հնչակ. զինւորներին	76
65.	Երազ	76
66.	Կոռնել	77

«Ազգային գրադարան



NL0115017

ԳԻՆՆ Է 85 ԿՈՊ.  
Ժամապահածախոսի 80 կռպ.

Ծախւում է Թիֆլիսի բոլոր հայ գըավա-  
ճառանոցներում։ Գումարով գնողներին  
25 տոկոս զեղջ և պէտք է վիմեն հետեւել  
հասցէով՝ Տիֆլիս, Կոտլարևսկայ 8. Խա-  
տուր Վարտանով։

Հ 5п
2386